

Շուշանիկ Դուկասյան

ՀՀ արդարադատության նախարարության «Օրենսդրության զարգացման և իրավական հետազոտությունների կենտրոն» հիմնադրամի մասնավոր իրավունքի ոլորտի փորձագետ, Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ, ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՁ

Ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերությունների հետևանքով պատճառված վնասի հատուցումը կարող է իրականացվել ինչպես պայմանագրային, այնպես էլ արտապայմանագրային պատասխանատվությունը սահմանող նորմերով, ինչի կապակցությամբ հողվածում առանձնացվել են դրանց հիմնական տարբերությունները, վերլուծվել է հայցերի մրցակցության հիմնախնդիրը, առանձնացվել են այն չափանիշները, որոնց առկայության դեպքում վնաս կրած անձին ընձեռվում է արտապայմանագրային պատասխանատվություն սահմանող նորմերով հատուցման պահանջ ներկայացնելու հնարավորություն վնաս պատճառողի հետ պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվելու դեպքում: Միջազգային փորձի վերլուծության, իրավաբանական անձանց բնորոշ հատկանիշների հիման վրա քննարկվել է «սպառող» հասկացության շրջանակի ընդլայնման նպատակահարմարության և հիմնավորվածության խնդիրը, հիմնավորվել է միայն ֆիզիկական անձանց արտապայմանագրային պատասխանատվություն սահմանող նորմերով հատուցման պահանջ ներկայացնելու իրավական հնարավորության ընձեռման անհրաժեշտությունը:

Հիմնարաներ- Ապրանքներ, աշխատանքներ, ծառայություններ, պատճառված վնաս, հատուցում, պայմանագրային և արտապայմանագրային պատասխանատվության տարբերություն, հայցերի մրցակցություն, սպառողների շրջանակ:

Ապրանքների, աշխատանքների և ծառայությունների (այսուհետ՝ Ապրանքների) թերությունների հետևանքով պատճառված վնասի դեպքում կարևոր նշանակություն ունի պայմանագրային և արտապայմանագրային պատասխանատվության հիմնական տարբերությունների վերհանումը, քանի որ այս հարցի պարզաբանումը անմիջականորեն կապված է վնասի հատուցման իրավունքի իրացման, վնասի հատուցման արդյունավետ ընթացակարգերի սահմանման և ապահովման հետ: Սա պայմանավորված է նաև նրանով, որ Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի դեպքում՝ հատուցումը կարող է իրականացվել թե՛ պայմանագրային, թե՛ արտապայմանագրային պատասխանատվությունը սահմանող նորմերով՝ հաշվի առնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) և «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի առանձնահատկությունները (այսուհետ՝ Օրենք):

Օրենսգրքի «Վնաս պատճառելու հետևանքով ծագած պարտավորություններ» վերտառությամբ 60-րդ գլխի 3-րդ պարագրաֆի վերլուծությունից բխում է, որ այն կարգավորում է Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի հա-

մար արտապայմանագրային պատասխանատվության հարցերը, քանի որ պատասխանատվության այս տեսակը առաջանում է քաղաքացու կյանքին, առողջությանը և գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին «վնաս պատճառելու» հետևանքով: Դրա մասին է վկայում նաև այն, որ այս ինստիտուտը գետեղված է Օրենսգրքի 60-րդ՝ «Վնաս պատճառելու հետևանքով ծագած պարտավորություններ» վերտառությամբ գլխի ներքո:

Մասնավորապես, Օրենսգրքի 1088-րդ հոդվածը սահմանում է, որ քաղաքացու կյանքին, առողջությանը, գույքին կամ իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը ենթակա է հատուցման ապրանք վաճառողի կամ արտադրողի, աշխատանք կատարողի կամ ծառայություններ մատուցողի կողմից՝ անկախ նրանց մեղքից և նրանց հետ տուժողի պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվելու պարագայից:

Օրենսգրքի վերլուծությունը հնարավորություն է ընձեռում առանձնացնել այն հիմնական առանձնահատկությունները, որոնք բնորոշ են գույքային պատասխանատվության այս տեսակին և որոնցով այն տարբերվում է պայմանագրային պատասխանատվությունից՝

www.journal.lawinstitute.am

1. Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի դեպքում տուժողը արտապայմանագրային պատասխանատվությունը սահմանող նորմերով հատուցման պահանջ ներկայացնելու իրավունք ունի ինչպես վնաս պատճառողի հետ պայմանագրային հարաբերությունների մեջ չգտնվելու, այնպես էլ գտնվելու դեպքում: Այս եզրահանգումը բխում է Օրենսգրքի 1088-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությունից, որտեղ օրենսդրի կողմից «անկախ տուժողի հետ պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվելու» հանգամանքի ամրագրումը մեր կարծիքով անհրաժեշտ է մեկնաբանել այն իմաստով, որ օրենսդրությամբ, որպես ընդհանուր կանոնից բացառություն, նախատեսվում է արտապայմանագրային պատասխանատվությունը սահմանող նորմերով ղեկավարվելու իրավական հնարավորություն նաև այն դեպքում, երբ տուժողը և վնաս պատճառողը գտնվել են պայմանագրային իրավահարաբերությունների մեջ: Մինչդեռ, պայմանագրային պատասխանատվությունը վրա է հասնում միայն պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվող սուբյեկտի կողմից՝ պայմանագրով մյուս կողմի հանդեպ ստանձնած պարտավորության խախտման արդյունքում:

2. Արտապայմանագրային պատասխանատվությունը սահմանող նորմերով հատուցման պահանջ ներկայացնելիս՝ որպես տուժող, կարող են հանդիսանալ ոչ միայն անմիջականորեն Ապրանքներ ձեռքբերող սուբյեկտները, այլ նաև երրորդ անձինք, որոնց վնաս է պատճառվել այլ անձի կողմից ձեռք բերված Ապրանքների թերությունների արդյունքում: Ի տարբերություն վերը նշվածի՝ պայմանագրային պատասխանատվության դեպքում՝ որպես տուժող, կարող է հանդես գալ միայն պայմանագրի կողմը:

3. Արտապայմանագրային պատասխանատվությունը սահմանող նորմերով հատուցման պահանջ ներկայացնելու դեպքում պատասխանատվությունը վրա է հասնում առանց մեղքի՝ այսինքն նախատեսվում է վնաս պատճառած անձի «առավել խստացված» պատասխանատվություն: Չնայած նրան, որ պայմանագրային պատասխանատվության դեպքում գործում է մեղավորության կանխավարկածը, այնուամենայնիվ, Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի ուժով պարտապանը կարող է սպացուցել իր մեղքի բացակայությունը և պատասխանատու չլինել պարտավորությունը խախտելու համար¹:

4. Պայմանագրային պատասխանատվության ծավալը կարող է փոփոխել կողմերի փոխադարձ համաձայնությամբ, մինչդեռ արտապայմանագրային պատասխանատվության կանոնները սահմանվում են օրենսդրությամբ²:

Այսպիսով, առանձնացնելով պայմանագրային և արտապայմանագրային պատասխանատվության հիմնական տարբերությունները, կարող ենք եզրահանգել, որ, որպես կանոն, Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի դեպքում՝ արտապայմանագրային պատասխանատվության կանոններով վնասի հատուցման իրավունքի իրացումը առավել արդյունավետ է, իսկ ամբողջական ծավալով՝ վնասի հատուցման ապահովումը առավել կանխատեսելի և իրատեսական:

Առանձնացնելով պայմանագրային և արտապայմանագրային պատասխանատվության հիմնական տարբերությունները՝ հարկ ենք համարում նաև նշել, որ Օրենքի և Օրենսգրքի հիմնական տարբերությունն այն է, որ Օրենքի իրավակարգավորման հիմնական առարկան սպառողի և սպրանք վաճառողի (արտադրողի, ծառայություն մատուցողի կամ աշխատանքներ կատարողի) միջև առաջացող պայմանագրային հարաբերություններն են, մինչդեռ Օրենսգրքի 60-րդ գլխի 3-րդ պարագրաֆը ուղղված է արտապայմանագրային պատասխանատվության հարցերի կարգավորմանը: Բացի այդ, Օրենքի գործողությունը տարածվում է բացառապես սպառողական նպատակով Ապրանքներ ձեռք բերող քաղաքացիների մասնակցությամբ առաջացող իրավահարաբերությունների նկատմամբ, և կիրառելի չէ իրավաբանական անձի նկատմամբ, իսկ Օրենսգիրքը ուղղված է նաև սպառողական նպատակով Ապրանք ձեռք բերող իրավաբանական անձի մասնակցությամբ առաջացող հարաբերությունների կարգավորմանը: Բացի այդ, Օրենքը չի կարգավորում քաղաքացիների միջև Ապրանքների վաճառքի ժամանակ ծագող հարաբերությունները: Այն ուղղված է մի կողմից՝ քաղաքացու, և մյուս կողմից՝ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի միջև առաջացող հարաբերությունների կարգավորմանը, իսկ Օրենսգիրքը կարգավորում է նաև քաղաքացիների միջև Ապրանքների վաճառքի ժամանակ առաջացող հարաբերությունները:

Վերլուծելով վերը նշված ակտերի և պայմանագրային ու արտապայմանագրային պատասխանատվության հիմնական տարբերությունները՝ անհրաժեշտ է քննարկել նաև այն հարցը, թե արդյո՞ք Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի դեպքում տուժողը կարող է իր սեփական հայեցողությամբ ներկայացնել վնասի հատուցման պահանջ արտապայմանագրային պատասխանատվությունը սահմանող նորմերով վնաս պատճառողի հետ պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվելու դեպքում: Վերը նշված հարցի համատեքստում գրականության մեջ հաճախ քննարկման առարկա է դարձել «հայցերի մրցակցության» խնդիրը, քանի որ առկա չէ միասնական մո-

տեցում, թե արդյո՞ք վնաս կրած անձը ունի պայմանագրային և արտապայմանագրային պատասխանատվության միջև ընտրություն կատարելու հնարավորություն: Այս առումով, որոշ մասնագետներ ընդունում են «հայցերի մրցակցության»³ հնարավորությունը, որոշները՝ ոչ:

«Մրցակցություն» տերմինը առաջացել է լատիներեն «concurrere» բառից, որը նշանակում է «բախում»: Հռոմեական իրավունքում «հայցերի մրցակցություն» թույլատրվել է այն դեպքում, երբ տուժողը ունեցել է իրավախախտի դեմ մի քանի նույնանման նպատակ հետապնդող պահանջ ներկայացնելու իրավունք⁴: Ա.Ս. Մամինը և Ռ.Վ. Խալինը հայցերի մրցակցությունը բնորոշում են որպես պարտատիրոջը պատկանող և պարտապանի դեմ ուղղված հավասարաթեք պահանջներ, որոնք, ունենալով այլընտրանքային բնույթ, ուղղված են միևնույն իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը⁵: Մոզլինի, Կաբակինի, Կունիկի տեսակետի համաձայն՝ սպառողներին՝ որպես առավել չպաշտպանված կողմի, պետք է ընձեռվի հայցերի մրցակցության իրավունք: Ն.Մ. Ֆրոլովան, անդրադառնալով ՌԴ քաղաքացիական օրենսդրության վերլուծությանը, գտնում է, որ վեճի կողմերի՝ պայմանագրային և արտապայմանագրային հարաբերությունների մեջ գտնվելու դեպքում՝ անձին չի ընձեռում հայցի տեսակը ընտրելու հնարավորություն: Օրենսդրությամբ՝ միայն բացառության կարգով է թույլատրվում պայմանագրային և արտապայմանագրային հայցերի մրցակցություն⁶ ընտրության իրավունքը վերապահելով սպառողին⁷:

Հայցերի մրցակցության հնարավորությունը բացառում են Օ.Ս. Իոֆեն, Օ.Գ. Երշովը, Ռ.Վ. Խալինը և այլ հեղինակներ: Խալինը օրինակ գտնում է, որ արտադրողին կամ վաճառողին հատուցման պահանջ ներկայացնելու այլընտրանքային հնարավորության նախատեսումը չպետք է դիտարկել որպես հայցերի մրցակցություն, քանի որ տուժողին ընձեռվում է ոչ թե վնասի հատուցման հիմքերի, այլ վնաս պատճառած սուբյեկտների միջև ընտրություն կատարելու հնարավորություն⁷:

Վերլուծելով վերը նշված բոլոր տեսակետները և հաշվի առնելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ ամրագրված արտապայմանագրային և պայմանագրային պատասխանատվության առանձնահատկությունները՝ գտնում ենք, որ Օրենսգրքով, որպես ընդհանուր կանոնից բացառություն, թույլատրվում է պայմանագրային և արտապայմանագրային հայցերի մրցակցություն: Մեր կարծիքով, օրենսդրի կողմից բացառության կարգով «հայցերի մրցակցություն» թույլատրելու իրավական հնարավորությունը պայմանավորված է պաշտպանության ենթակա օբյեկտների՝ անձի

կյանքի և առողջության կարևորությամբ, այդ օբյեկտներին վնաս պատճառելու դեպքում՝ պաշտպանվածության ավելի բարձր աստիճան ապահովելու և վնասի հատուցման ամբողջական ծավալով իրականացումն ապահովելու անհրաժեշտությամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսդրության վերլուծությունը հնարավորություն է ընձեռում առանձնացնել այն չափանիշները, որոնց միաժամանակյա առկայության դեպքում հնարավոր է «հայցերի մրցակցություն»: Մեր կարծիքով, դրանք են՝

1. վնաս պատճառողի և տուժողի՝ պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվելը.

2. վնաս պատճառողի կողմից պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվելու դեպքում անձի կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելը.

3. օրենսդրորեն վնասի հատուցումը պայմանագրային կամ արտապայմանագրային պատասխանատվությունը սահմանող նորմերով պահանջելու հնարավորություն ամրագրելը, որից օգտվելը պայմանավորված է պայմանագրով պատասխանատվության ավելի բարձր չափ ամրագրված լինելու կամ չլինելու հանգամանքից,

4. պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվելու պարագայում անձի կյանքին, առողջության կամ գույքին վնաս պատճառող հակաօրինական գործողության՝ անմիջականորեն պայմանագրով ստանձնած պարտականությունների կատարման հետ առնչություն չունենալը:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ գտնում ենք, որ Օրենսգրքի 1088-րդ հոդվածով նախատեսված՝ արտապայմանագրային և պայմանագրային հայցերի մրցակցության հիմքում ևս պետք է դրվեն վերը նշված չափանիշները, քանի որ գործող իրավակարգավորմամբ հստակ չէ, թե Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի պարագայում, երբ պետք է թույլատրվի հայցերի մրցակցություն: Սա բացատրվում է նրանով, որ, Օրենսգիրքը, ամրագրելով վնաս պատճառած կամ պատասխանատվություն կրող սուբյեկտին հատուցման պահանջ ներկայացնելու տուժողի ընտրության իրավունքը՝ անկախ վերջիններիս հետ պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվելու հանգամանքից՝ չի նախատեսել այդ իրավունքի իրացման իրավաչափության պայմանները⁸: Հաշվի առնելով վերը նշվածը՝ գտնում ենք, որ Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի դեպքում որպես պայմանագրային և արտապայմանագրային պատասխանատվության մրցակցության և դրանց կիրառելիության հստակ չափանիշ ևս պետք է առանձնացնել պայմանագրով պաշտպանվածության առավել բարձր մակարդակի՝ կամ այլ կերպ ասած՝ պատասխանատվության առավել

բարձր ծավալի նախատեսումը: Մա նախ և առաջ պայմանավորված է պատճառված վնասի լրիվ ծավալով հատուցման, տուժողի համար պատճառված վնասի ամբողջական վերականգման երաշխիքների ապահովման անհրաժեշտությունից, ինչը բխում է վնասի հատուցման հարաբերություններում Օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված՝ խախտված իրավունքների վերականգման ապահովման սկզբունքի ընդհանուր տրամաբանությունից:

Սա բացատրվում է նաև նրանով, որ, միայն պայմանագրով պատասխանատվության առավել բարձր ծավալի նախատեսման պարագայում իրավաչափ կլինի արտապայմանագրային պատասխանատվությունը սահմանող նորմերով վնասի հատուցում չպահանջելը՝ հաշվի առնելով այն, որ պայմանագրով արդեն իսկ երաշխավորված է վնասի ամբողջական ծավալով հատուցման հնարավորությունը: Հակառակ պարագայում, կարող է ստեղծվել մի իրավիճակ, երբ պայմանագրով կողմերն ազատորեն կարող են փոխել պատասխանատվության ծավալը, և արդյունքում չի ապահովվի ամբողջական ծավալով վնասի հատուցման իրականացումը: Ինչպես վերը նշեցինք, ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ «հայցերի մրցակցության գաղափար»-ի հիմքում ընկած է նաև այնպիսի չափանիշ, ինչպիսին պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվելու պարագայում անձի կյանքին, առողջությանը կամ գույքին վնաս պատճառող հակաօրինական գործողության՝ անմիջականորեն պայմանագրի կատարման հետ առնչություն չունենալն է: Այս առումով, հարց կարող է առաջանալ, թե ինքնին թերություն ունեցող Ապրանքների ձեռքբերումը կարո՞ղ է արդյոք դիտարկվել որպես անձի «գույքին» պատճառված վնասի առկայություն, թե՛ ոչ: Մենք հակված են այն տեսակետին, որ Օրենսգրքի 1088-րդ հոդվածում օգտագործվող «գույքին պատճառված վնաս» հասկացությունը պետք է բացառապես մեկնաբանվի որպես ձեռք բերված Ապրանքի թերության հետևանքով անձին պատկանող «այլ գույքին» պատճառված վնաս, և Ապրանքի թերության առկայությունը ինքնին չպետք է հանգեցնի արտապայմանագրային պատասխանատվության, քանի որ այս դեպքում թերություն ունեցող ապրանքի վաճառքը (այլ գործողությունը) իրենից ներկայացնում է այնպիսի խախտում, որն անմիջականորեն առնչվում է պայմանագրով ստանձնած պարտականությունների խախտման հետ, որի պարագայում անձի կողմից ներկայացվող պահանջը ևս պետք է բխի պայմանագրային պարտականությունների չկատարումից կամ ոչ պատշաճ կատարումից:

Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի հատուցման հարցերին

անդրադառնալիս՝ անհրաժեշտ է նաև քննարկել այն հարցը, թե ովքեր կարող են հանդես գալ որպես սպառողներ՝ հաշվի առնելով այն, որ Օրենսգրքի 1088-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վնասի հատուցման կանոնները կիրառվում են միայն սպառողական նպատակով Ապրանքներ ձեռք բերելու դեպքում: Այս հարցի կապակցությամբ տարբեր են մտնեցումները Օրենքում և Օրենսգրքում: Մասնավորապես, Օրենքի 1-ին հոդվածով որպես սպառող է դիտարկվում ձեռնարկատիրական գործունեության հետ չկապված, Ապրանքների պատվիրման կամ ձեռքբերման մտադրություն ունեցող քաղաքացին: Ի տարբերություն Օրենքի՝ Օրենսգրքի 1088-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համադրված վերլուծությունը ցույց է տալիս, որ իրավաբանական անձը ևս կարող է դիտարկվել որպես սպառողական նպատակով Ապրանքներ ձեռք բերող սուբյեկտ: Չնայած Օրենսգրքի 1088-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում ուղղակիորեն չի նշվում իրավաբանական անձի՝ սպառող հանդիսանալու վերաբերյալ, սակայն իրավաբանական անձը դիտարկվում է որպես սպառողական նպատակով Ապրանք ձեռք բերող առանձին սուբյեկտ, ինչը մեր կարծիքով բովանդակային առումով նույնանում է «սպառող» եզրույթի հետ: Ասվածը հիմնավորվում է նաև Օրենսգրքի 1091-րդ հոդվածի իրավակարգավորման լույսի ներքո, որը, որպես պատճառված վնասի համար պատասխանատվությունից ազատելու հիմք, նախատեսում է սպառողի (ընդգծումը մերն է) կողմից Ապրանքների օգտագործման կամ պահպանման կանոնները խախտելը: Օրենսդրի կողմից վերը նշված հոդվածում «սպառող» եզրույթի օգտագործումն արդեն իսկ հուշում է, որ իրավաբանական անձինք, ֆիզիկական անձանց հետ մեկտեղ, դասվում են սպառողների շարքը՝ ընդ որում որևէ տարբերակում չի դրվում առևտրային և ոչ առևտրային իրավաբանական անձանց միջև: Այս առումով պետք է քննարկել այն հարցը, թե արդյոք հիմնավոր է իրավաբանական անձանց սպառողների շարքը դասելը և վերջիններիս ֆիզիկական անձանց վերապահված իրավական պաշտպանության համարժեք միջոցներ ընձեռելը: Հարկ է նշել, որ բարձրացված հարցադրումը քննարկման առարկա է դարձել նաև մասնագիտական գրականության մեջ: Օրինակ՝ Հոնդիուսի կարծիքով իրավաբանական անձինք չեն հանդիսանում սպառող, քանի դեռ չեն ապացուցում, որ չունեն կամ չեն կարող ունենալ Ապրանքների ձեռքբերման կամ օգտագործման մասնագիտական հմտություններ: Շոենմեյերսի տեսակետի համաձայն՝ «սպառող» հասկացությունը ներառում է միայն այն ֆիզիկական անձանց, որոնք հանդես են գալիս իրենց առևտրային, ձեռնարկատիրական կամ մասնագիտական գործունեության շրջանակից դուրս¹⁰:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Ուշադրության է արժանի այն, որ Եվրոպական երկրներում իրավաբանական անձինք չեն դիտարկվում որպես սպառող անգամ այն դեպքում, երբ վերջիններս, իրականացնելով ոչ առևտրային բնույթի գործունեություն, ձեռք են բերում Ապրանքներ՝ սպառողական նպատակով: Սակավաթիվ երկրներում են իրավաբանական անձինք դիտարկվում սպառող այն դեպքում, երբ ձեռք են բերում Ապրանքներ՝ մասնավոր օգտագործման նպատակով (Ավստրիա, Չեխիայի Հանրապետություն, Հունաստան, Իսպանիա)¹¹: Եվրոպական Միության կողմից սպառողների իրավունքների պաշտպանության բնագավառում ընդունված բազմաթիվ դիրեկտիվներում ևս «սպառող» հասկացությունը ընդգրկում է բացառապես այն ֆիզիկական անձանց, որոնք գործում են ձեռնարկատիրական կամ իրենց կողմից իրականացվող մասնագիտական գործունեության շրջանակից դուրս, իսկ իրավաբանական անձինք՝ այդ թվում ոչ առևտրային, չեն հանդիսանում սպառողներ¹²: Ուշադրության է արժանի նաև այն, որ Եվրոպական Միության 2011 թվականի հոկտեմբերի 25-ի «Սպառողների իրավունքների մասին» Գիրեկտիվի 2-րդ հոդվածով սպառող է դիտարկվում միայն ֆիզիկական անձը, իսկ Գիրեկտիվը հնարավորություն է ընձեռում պետություններին միայն ցանկության դեպքում ընդլայնել սպառողների շրջանակը՝ ներառելով բացառապես փոքր և միջին ձեռնարկություններին և այն կազմակերպություններին, որտեղ պետությունը չունի մասնակցություն¹³: Մեր կարծիքով, նման իրավակարգավորման հիմքում ընկած է այն գաղափարը, որ, որպես ընդհանուր կանոնից բացառություն, միայն առանձին իրավաբանական անձանց է հիմնավոր ֆիզիկական անձանց ընձեռված պաշտպանության նույն միջոցների տրամադրումը՝ ապրանքային շուկայում մասնակցության փոքր ծավալի, վերջիններիս պաշտպանության առավել թույլ երաշխիքների պատճառով՝ հաշվի առնելով, որ տվյալ ապրանքային շուկայում գործող, իրացման առավել մեծ ծավալ ունեցող սուբյեկտները կարող են որոշիչ ազդեցություն ունենալ ապրանքաշրջանառության ընդհանուր պայմանների վրա և այլ սուբյեկտների հետ հարաբերություններում լինել առավել պաշտպանված:

Այս առումով ուշադրության է արժանի նաև Եվրոպական Միության Արդարադատության դատարանի որդեգրված մոտեցումը սպառողների շրջանակի ընդլայնման նպատակահարմարության վերաբերյալ: Մասնավորապես՝ *Cape Snc v Idealservice Srl* և *Idealservice MN RE Sas v OMAI Srl*. գործով դատարանը, քննելով իրավաբանական անձին «սպառող» հասկացության մեջ ներառելու հարցը, արտահայտել է դիրքորոշում այն մասին, որ 1993 թվականի ապրիլի 5-ի Եվրոպական Միության 93/13 Գի-

րեկտիվում օգտագործվող «սպառող» հասկացությունը տարածվում է միայն ֆիզիկական անձանց նկատմամբ¹⁴: Գործի շրջանակում ներկայացված կարծիքի համաձայն «սպառող» հասկացության մեջ իրավաբանական անձանց չներառելը պայմանավորված է դատարանի այն դիրքորոշմամբ, որ սպառողի համար նախատեսված պաշտպանության համակարգը հիմնված է այն գաղափարի վրա, որ վերջինս գտնվում է առավել խոցելի և ոչ կայուն վիճակում՝ գիտելիքի պակասի և շուկայում ունեցած դիրքի պատճառով: Իրավաբանական անձինք սովորաբար չեն գտնվում նման վիճակում, և հետևաբար առկա չէ վերջիններիս նման պաշտպանություն տրամադրելու անհրաժեշտությունը¹⁵:

Մեր կարծիքով, իրավաբանական անձանց սպառողների շրջանակին դասելու նպատակահարմարության հարցը պետք է քննարկվի նաև իրավաբանական անձին՝ որպես քաղաքացիական իրավունքի առանձին սուբյեկտին բնորոշ հատկանիշների համատեքստում: Գրականության մեջ որպես այդպիսիք առանձնացվել են՝

1) գործառնական հատկանիշը, որը դրսևորվում է իրավաբանական անձի կազմակերպական միասնության մեջ,

2) տնտեսական հատկանիշը՝ իրավաբանական անձի գույքային առանձնացվածությունը,

3) ինքնուրույն գույքային պատասխանատվությունը, որը անմիջականորեն կապված է գույքային առանձնացվածության հետ,

4) նյութաիրավական հատկանիշն, որն արտահայտվում է քաղաքացիաիրավական հարաբերություններում իր անունից ինքնուրույն հանդես գալու, իրավունքներ և պարտականություններ ձեռք բերելու, իրականացնելու ունակությամբ և

5) դատավարական հատկանիշը՝ դատարանում որպես հայցվոր կամ պատասխանող ինքնուրույն հանդես գալու հնարավորությունը¹⁶:

Հաշվի առնելով իրավաբանական անձին բնորոշ հատկանիշների ողջ համակցությունը, վերջինիս կազմակերպական միասնությունը, քաղաքացիաիրավական հարաբերություններում իր անունից որպես առանձին սուբյեկտ հանդես գալու ինքնուրույնությունը, կարող ենք արձանագրել, որ ապրանքային շուկայում իրավաբանական անձը, որպես տարբեր անձանց կոլեկտիվ շահերը համախմբող սուբյեկտ, առավել մասնագիտացված և պաշտպանված է:

Այսպիսով, համադրելով նաև միջազգային փորձի վերլուծության արդյունքները, Եվրոպական Միության Արդարադատության դատարանի որդեգրված՝ շուկայում առավել թույլ դիրք ունեցող սուբյեկտին պաշտպանության առավել լայն երաշխիքներ ընձեռելու մոտեցումը, մենք կարծում ենք, որ

Օրենսգրքի 1088-րդ հոդվածով իրավաբանական անձանց սպառողների շարքը դասելը և ֆիզիկական անձանց ընձեռված իրավական պաշտպանության համարժեք միջոցներ տրամադրելը հիմնավոր չէ: Ասվածը հատկապես վառ է արտահայտվում առևտրային բնույթի իրավաբանական անձանց պարագայում, որոնք, որպես ինքնուրույն, իրենց ռիսկով գործունեություն իրականացնող սուբյեկտներ՝ պետք է ապրանքաշրջանառության ոլորտում ևս պատշաճ գնահատեն բոլոր հնարավոր ռիսկերը: Բացի այդ, պետք է հաշվի առնել այն, որ իրավաբանական անձը անգամ ոչ ձեռնարկատիրական գործունեության մեջ օգտագործելու նպատակով Ապրանքներ ձեռք բերելիս, հնարավորություն է ստանում իր կատարած ծախսերի չափով նվազեցնել հարկվող շահույթը: Սա ևս մեկ անգամ հավաստում է, որ իրավաբանական անձի կողմից նման Ապրանքների ձեռքբերումը այսպես թե այնպես օգտագործվում է (ուղղակիորեն կամ անուղղակիորեն) ձեռնարկատիրական գործունեության իրականացման պրոցեսում, իսկ դրան հավելագրվում է նաև իրավաբանական անձի կողմից պատճառած վնասի հատուցում պահանջելու հնարավորությունը, ինչը կարող է հանգեցնել բազմաթիվ չարաշահումների:

Բացի այդ, իրավաբանական անձանց սպառողների շարքը դասելը չի բխում նաև միջազգայնո-

րեն ճանաչված և սպառողներին ընձեռվող հիմնական իրավունքների էությունից՝ ինչպիսիք են առողջության և անվտանգության պահպանման իրավունքը, տնտեսական շահերի պաշտպանության, փոխհատուցման, տեղեկացված լինելու և լավելու իրավունքները¹⁷, քանի որ դրանք իրենց բնույթով և էությամբ բնութագրական են ֆիզիկական անձանց: Մեր կարծիքով, սպառողական ոլորտում իրավաբանական անձանց իրավունքների պաշտպանության խնդրի առավել ընդունելի և հիմնավոր լուծումը իրավաբանական անձանց կողմից իրենց իրավունքների պաշտպանությունը պայմանագրային հարաբերությունների շրջանակում ամբողջ ծավալով՝ այդ թվում՝ պատճառված վնասի հատուցման մասով իրացնելն է՝ օգտվելով Օրենքով վերջիններիս ընձեռված բոլոր հնարավորություններից: Հաշվի առնելով իրականացված վերլուծությունը՝ գտնում ենք, որ Օրենսգրքի 1088-րդ հոդվածի 1-ին մասով արտապայմանագրային պատասխանատվության կանոններով վնասի հատուցում պահանջելու իրավական հնարավորություն պետք է ընձեռվի միայն ֆիզիկական անձանց:

¹ Բացառությամբ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող սուբյեկտների, որոնց համար Օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսվում է առանց մեղքի պատասխանատվություն:

² Ընդ որում, պայմանագրային պատասխանատվության ծավալը կարող է փոփոխվել նաև ի վնաս տուժողի, ինչը կարող է հանգեցնել Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի՝ ոչ լրիվ ծավալով հատուցմանը:

³ Հարկ է նշել, որ «հայցերի մրցակցություն» եզրույթը վերաբերելի է ոչ թե տարբեր հայցատեսակներին, այլ վնաս կրած անձի կողմից հատուցում պահանջելու համար պայմանագրային կամ արտապայմանագրային պատասխանատվությունը սահմանող նորմերով ղեկավարվելու հնարավորությանը:

⁴ Տե՛ս, Блинкова Е.В. “Конкуренция договорных и деликтных исков в гражданском праве: исторический и сравнительно-правовой аспект.” известия Юго-Западного государственного университета, История и Право, 2011, N 16, էջեր 17-18:

⁵ Տե՛ս, Мамин А. С., Халин Р. В “Сравнительно-правовой анализ разграничения договорной и деликтной ответственности за вред, причиненный вследствие недостатков товаров, работ или услуг по действующему законодательству РФ”, Бизнес в законе, Экономико-юридический журнал, 2013, N 6, էջ 46:

⁶ Տե՛ս, այս հեղինակների կարծիքը վերը նշված աշխատությունում, էջեր 46-47:

⁷ Տե՛ս, Халин Р.В., “Гражданско-правовая ответственность за вред, причиненный недостатками товаров, работ и услуг по праву России, Англии и США”, автореферат дис., 5, С. 56-57.

⁸ Ուշադրության է արժանի այն, որ Քաղաքացիական օրենսգրքի 868-րդ, 1077-րդ հոդվածներով ևս նախատեսվում է պայմանագրային և արտապայմանագրային հայցերի մրցակցություն տուժողի և վնաս պատճառողի պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվելու դեպքում, ինչը կախված է պայմանագրով կամ օրենքով պատասխանատվության ավելի բարձր չափ նախատեսված լինելու հանգամանքից:

⁹ Տե՛ս, Hondius Ewoud, “The Notion of Consumer: European Union versus Member States”, 2006, Syd L Rev 28, էջ 94:

¹⁰ Տե՛ս, Schoenmakers, W. The Notion “Consumer” in European Private Law”, Diss. Master Thesis, 2014, էջ 43:

¹¹ Տե՛ս, Manko, Rafal, “The Notion of Consumer in EU Law”, Library of the European Parliament, 2013, էջեր 1-2:

¹² St'u, Jana Valant, "Consumer protection in the EU", European Parliamentary Research Service, 2015, հասանելի՝ [http://www.europarl.europa.eu/RegData/etudes/IDAN/2015/565904/EPRS_IDA\(2015\)565904_EN.pdf](http://www.europarl.europa.eu/RegData/etudes/IDAN/2015/565904/EPRS_IDA(2015)565904_EN.pdf) հղումով՝ 05.04.2017թ. դրությամբ:

¹³ St'u, Directive 2011/83/EU of the European parliament and of the Council of 25 October 2011 "On consumer rights, amending Council Directive 93/13/EEC and Directive 1999/44/EC of the European Parliament and of the Council and repealing Council Directive 85/577/EEC and Directive 97/7/EC of the European Parliament and of the Council, Official Journal of the European Union:

¹⁴ St'u, Joined cases C-541/99 and C-542/99 Cape Snc v Idealservice Srl և Idealservice MN RE Sas v OMAI Srl. ECJ, 2001:

¹⁵ St'u, Opinion of Advocate General Mischo, Delivered on 14 June 2001, Cape and Idealservice MN RE, մասնաշարժ է՝ <http://curia.europa.eu/juris/showPdf.jsf?text=&docid=46434&pageIndex=0&doclang=en&mode=lst&dir=&occ=first&art=1&cid=583505> հղումով՝ 22.03.2017թ. դրությամբ:

¹⁶ St'u, Ավետիսյան Վ. Գ., Կորպորատիվ իրավահարաբերությունների արդի հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում (տնտեսական ընկերությունների օրինակով), մենագրություն, ԵՊՀ հրատ., Եր, 2013, էջեր՝ 39-41:

¹⁷ St'u, Սպառողների հիմնական իրավունքների մասով Schoenmakers, W., վերը նշված աշխատությունը, էջ 11:

Шушаник Гукасян

Аспирант кафедры гражданского права юридического факультета ЕГУ
Эксперт частного права Фонда «Центр развития законодательства
и правовых исследований» Министерства юстиции РА

РЕЗЮМЕ

Некоторые вопросы о возмещение вреда, причиненного вследствие недостатков товаров, работ и услуг

Возмещение вреда, причиненного вследствие недостатков товаров, работ и услуг может быть основана на нормах договорной и деликтной ответственности. В связи с этим в статье определяются основные различия между договорной и деликтной ответственностью, анализируется вопрос о конкуренции исков, определяются критерии, по которым пострадавшему предоставляется право подать иск на основании условий деликтной ответственности в связи с договорными отношениями с ответственной стороной. В результате анализа международного опыта и характерных особенностей юридических лиц проанализирован вопрос о целесообразности и обоснованности расширения понятия потребителя. Было обосновано предоставление правовой возможности подачи требования о возмещение вреда на основании внедоговорной ответственности только для физических лиц.

Ключевые слова: продукты, работы, услуги, вред, компенсация, разница между договорной и деликтной ответственностью, конкуренция исков, понятие потребителя.

Shushanik Ghukasyan

PhD student of the Chair of Civil Law of the Faculty of Law of the Yerevan State University
The private law expert of the Fund Of "The Center for Legislation
Development and Legal Researches" of the Ministry of Justice of RA

SUMMARY

Certain issues regarding the compensation for the damage caused by the shortcomings of goods, works and services

The compensation for the damage caused by the shortcomings of goods, works and services can be claimed based on grounds of contractual and non-contractual liability. In regard of this the article identifies the main differences between contractual and non-contractual liability, analyses the issue of competition of claims, identifies the criteria under which an injured person is given the right to submit a claim based on grounds of non-contractual liability rules in connection with having contractual relationship with the responsible party. Analyzing the international experience and characteristic features of legal persons the issue of appropriateness and reasonableness of expanding the notion of consumer has been discussed. It was justified to provide legal possibility of filing a claim for compensation based on grounds of non-contractual liability only for natural persons.

Keywords: Products, works, services, damage, compensation, difference between contractual and non-contractual liability, competition of claims, notion of consumer.